

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/2

23 ապրիլի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 09.04.2013թ-ի նիստում քննության է առնվել «Հրաչուհի-Հոփսիսիմե» ՍՊԸ 02.04.2013թ-ի դիմումը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ 14.03.2013թ-ի թիվ 2119264 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ 14.03.2013թ-ի թիվ 2119264 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցվել է ընդամենը 8.053.171 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճար 3.750.020 դրամ, տույժ 2.053.139 դրամ, տուգանք 2.250.012 դրամ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ պետի 14.03.2013թ-ի թիվ 2119264 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Հրաչուհի-Հոփսիսիմե» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 14.03.2013թ-ին կազմվել է թիվ 2119264 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 30.942.097 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ներկայացված փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը զբաղվում է Երևան քաղաքի թիվ 7 և թիվ 122 միկրոավտոբուսային երթուղային գծերի կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման գործունեությամբ: Ընկերությունը նշված երթուղիների սպասարկման համար Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքել է պայմանագրեր՝ միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման և երթուղու սպասարկման ծառայությունների մատուցման համար:

Ընկերության կողմից 2009, 2010, 2011 և 2012թթ. ընթացքում ՏՀՏ ներկայացված Երևան քաղաքի միկրոավտոբուսային թիվ 7 երթուղու ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունները (հաստատագրված վճարի չափը) պակաս է կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման գործունեության տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների քանակից (հաստատագրված վճարի օրենքով սահմանված չափից).

Ընկերությունը 30.12.2005թ.-ի Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքված թիվ 002 պայմանագրի համաձայն՝ Երևան քաղաքի միկրոավտոբուսային թիվ 7 երթուղու սպասարկման համար մրցույթով շահած ավտոմեքենաների անհրաժեշտ քանակը թվով 34-ն է: ՀՀ կառավարության 16.08.2001թ. «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշման 21 կետի համաձայն, երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների (միկրոավտոբուսների) թիվը սահմանվում է հաստատված չվացուցակով երթուղու սպասարկման համար անհրաժեշտ յուրաքանչյուր 1-5 ավտոբուսի դեպքում՝ մեկ պահեստային ավտոբուսի հաշվարկով:

Տվյալ դեպքում թիվ 7 երթուղու սպասարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակը 34-ն է և վերը նշված կառավարության որոշման համաձայն պահեստային տրանսպորտային միջոցների քանակը 7-ն է: Հետևապես թիվ 7 երթուղու սպասարկման համար ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունները (հաստատագրված վճարի չափը) չէր կարող պակաս լինել 27 ավտոտրանսպորտային միջոցից (միկրոավտոբուսից): Սակայն ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված թիվ 7 երթուղու համար ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների չափը կազմել է. 2009թ. փետրվար ամսին՝ 22 մեքենա, մարտին՝ 22 մեքենա, ապրիլին՝ 24 մեքենա, մայիսին՝ 24 մեքենա, հունիսին՝ 24 մեքենա, հուլիսին՝ 22 մեքենա,

օգոստոսին՝ 22 մեքենա, սեպտեմբերին՝ 22 մեքենա, հոկտեմբերին՝ 22 մեքենա, նոյեմբերին՝ 25 մեքենա, դեկտեմբերին՝ 25 մեքենա, 2010թ. հունվար ամսին 24 մեքենա, փետրվարին՝ 23 մեքենա, մարտին՝ 23 մեքենա, ապրիլին՝ 24 մեքենա, մայիսին՝ 24 մեքենա, հունիսին՝ 24 մեքենա, հուլիսին՝ 23 մեքենա, օգոստոսին՝ 23 մեքենա, սեպտեմբերին՝ 23 մեքենա, հոկտեմբերին՝ 23 մեքենա, նոյեմբերին՝ 23 մեքենա, դեկտեմբերին՝ 23 մեքենա, 2011թ. հունվար ամսին 20 մեքենա, փետրվարին՝ 20 մեքենա, մարտին՝ 20 մեքենա, ապրիլին՝ 22 մեքենա, մայիսին՝ 22 մեքենա, հունիսին՝ 22 մեքենա, հուլիսին՝ 23 մեքենա, օգոստոսին՝ 23 մեքենա, սեպտեմբերին՝ 23 մեքենա, հոկտեմբերին՝ 23 մեքենա, նոյեմբերին՝ 23 մեքենա, դեկտեմբերին՝ 23 մեքենա, 2012թ. հունվար ամսին 23 մեքենա, փետրվարին՝ 23 մեքենա, մարտին՝ 23 մեքենա, ապրիլին՝ 23 մեքենա, մայիսին՝ 23 մեքենա, հունիսին՝ 23 մեքենա և հուլիսին՝ 23 մեքենա:

Այսպիսով, ընկերության կողմից խախտվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի 4 կետի պահանջները, այն է՝ եթե միկրոավտոբուսների քանակը, որոնց վերաբերյալ վճարողի կողմից սահմանված կարգով նախապես ներկայացվել է հայտարարություններ, պակաս է կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների (առանց պահուստային տրանսպորտային միջոցի) քանակից, ապա տվյալ ամսվա համար հաստատագրված վճարի չափը որոշվում է տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների (ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակով՝ օրենքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների պահանջները հաստատագրված վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 30.942.097 դրամ:

«Հրաչուհի-Հոփսիմե» ՍՊԸ դիմումում մասնավորապես նշված է.

1. Հիմք ընդունելով.

Ա/ Ընկերության կողմից ստուգման ժամանակահատվածում պետական բյուջե հաստատագրված վճարների գծով թվով 43 մեքենաների համար և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով թվով 43 վարորդների համար վճարումների փաստը.

Բ/ Ընկերությունը ստուգվող ժամանակահատվածում ՀՏ ներկայացված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարագրում թիվ 7 երթուղում ցույց տված պակաս ավտոմեքենաների փոխարեն թիվ 122 երթուղու ավտոմեքենաների վերաբերյալ ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարագրում ավել է ցույց տվել թվով 4 ավտոմեքենա, որոնք փաստացի շահագործվել են թիվ 7 երթուղում, այսինքն՝ ընկերության կողմից ՀՏ ընդհանուր թվով ներկայացված ավտոմեքենաների քանակը և պետական բյուջե կատարված հաստատագրված վճարների գումարը պակաս չի եղել 43 ավտոմեքենայից.

Գ/ Ընկերությունում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀԿ 5-րդ բաժնի կողմից 04.02.2009թ-ին կազմված տեղեկանքը, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀԿ Մասիսի բաժնի կողմից 21.10.2009 թ-ին կազմված թիվ 1703080 արձանագրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ-ի կողմից 16.11.2011 թ-ի թիվ 2106623 տեղեկանքը և ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ և 6-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջներով կազմել տեղեկանք՝ խախտման փաստի բացակայության հիմքով:

2. Ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ, 43-րդ հոդվածների իմպերատիվ դրույթներով, Երևանի քաղապետարանի «ԵՐԵՎԱՆՏՐԱՆԱ» ՓԲԸ-ին կատարել է ինքնուրույն հարցում, կամ ստուգում, ընկերության կողմից փաստացի շահագործված ավտոմեքենաների քանակը պարզելու համար:

Մասիսի ՀՏ կողմից նման գործողության իրականացման դեպքում սույն վիճարկվող ակտը չէր կազմվի:

3. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերը և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջները՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 16 օգոստոսի 2001 թ-ի թիվ 762 որոշման 59-րդ կետով՝ կազմել տեղեկանք խախտումների բացակայության փաստով:

4. Հարկային մարմինը վիճարկվող ակտը կազմելիս պարտավոր էր ղեկավարվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին՝ հոդվածի 2-րդ, 4-րդ կետերով և 3-րդ հոդվածով և բացահայտել ընկերության կողմից իր որոնողությունների արդյունքում հարկերը և պարտադիր այլ վճարները կանխամտածված կերպով խուսափելու և դրա հետևանքով պետությանը՝ պետ. բյուջեին պատճառած վնասի փաստը, որպիսի

հանգամանքը տվյալ դեպքում բացակայում է, քանի որ ըստ էության ընկերությունը ցանկացած դեպքում 01.02.2009-21.07.2012թթ ժամանակահատվածի համար հաստատագրված վճարների գծով վճարումները պետական բյուջե է վճարել 43 ավտոմեքենաների համար: Սույն փաստը հաստատվում է ոչ միայն ընկերության կողմից կատարված վճարումների անդորրագրերով, այլև ՀՏ ներկայացված ելակետային տվյալներով, որոնցում թիվ 7 և 122 երթուղիներում փաստացի շահագործվող ավտոմեքենաների հանրագումարը 43-ից պակաս չէ:

5. Շարժվելով պարզ տրամաբանությամբ ակնհայտ է մի փաստ, որ եթե վիճարկվող ակտը ճիշտ է, ապա այդ նույն պակաս ցույց տրված մեքենաների վարորդների մասով ևս պետք է արձանագրվեր համապատասխան խախտման՝ աշխատավարձի և սոց. վճարների կանխամտածված թաքցման փաստ: Հակառակն ընկերությունը սոցիալական ապահովության վճարների գծով ՀՏ է ներկայացրել 43 վարորդների և վարչական ապարատի համար հասանելիք հաշվետվությունը, որոնցում առկա չէ հարկվող օբյեկտի թաքցման կամ հարկից խուսափելու որևէ դեպք:

6. Արդյունքում ընկերությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի Ա, Բ, Գ, Դ կետերի հիմքով Մասիսի ՏՀՏ է ներկայացրել օրենքով սահմանված անհրաժեշտ հաշվետվությունները, հայտարարագրերն ու ելակետային տվյալները:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՀՏ-ի 14.03.2012 թվականի թիվ 2119264 սառուզման ակտը և որպես անվավերության հետևանք հաշվարկման քարտերից դուրս գրել վիճարկվող ակտում արձանագրված գումարը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և սառուզման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ընկերությունը 30.12.2005թ-ին Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքված թիվ 002 պայմանագրի համաձայն, Երևան քաղաքի միկրոավտոբուսային թիվ 7 երթուղու սպասարկման համար մրցույթով շահած ավտոմեքենաների (միկրոավտոբուսների) անհրաժեշտ քանակը թվով 34-ն է: ՀՀ կառավարության 16.08.2001թ-ի թիվ 762 որոշման 21 կետի համաձայն երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների (միկրոավտոբուսների) թիվը սահմանվում է հաստատված չվացուցակով երթուղու սպասարկման համար անհրաժեշտ յուրաքանչյուր 1-5 ավտոբուսի դեպքում 1 պահուստային ավտոբուսի հաշվարկով: Տվյալ դեպքում թիվ 7 երթուղու սպասարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակը 34-ն է և ՀՀ կառավարության նշված որոշման համաձայն պահուստային տրանսպորտային միջոցների քանակը կարող է լինել 7-ը, հետևաբար թիվ 7 երթուղու սպասարկման համար ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունները (հաստատագրված վճարի չափը) չէր կարող պակաս լինել 27 ավտոտրանսպորտային միջոցից (միկրոավտոբուսից): Սակայն, ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված թիվ 7 երթուղու ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների համաձայն, ավտոտրանսպորտային միջոցների քանակը տատանվել է 22-ից մինչև 25 ավտոտրանսպորտային միջոց: Արդյունքում ընկերության կողմից խախտվել են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, այն է՝ եթե միկրոավտոբուսների քանակը, որոնց վերաբերյալ վճարողի կողմից սահմանված կարգով նախապես ներկայացվել են հայտարարություններ, պակաս է կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների (առանց պահուստային տրանսպորտային միջոցի) քանակից, ապա տվյալ ամսվա համար հաստատագրված վճարի չափը որոշվում է տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների (ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակով՝ օրենքով սահմանված կարգով: Ղեկավարվելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով ընկերության կողմից թիվ 7 երթուղու համար ՏՀՏ ներկայացված հաստատագրված վճարի մեծությունը համարվել է չհիմնավորված և կատարվել է հաստատագրված վճարի մեծության հաշվարկում (զննհատում): Միաժամանակ, հիմք ընդունելով նույն օրենքի 94-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները հաստատագրված վճարի մեծությունը չհիմնավորված լինելու դեպքում հարկային տեսչության մարմինը այն հաշվարկում է հիմք ընդունելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը, այն է՝ նույն օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է ընկերության դիմումում նշված այ պնդմանը, որ ընկերությունը թիվ 7 և թիվ 122 երթուղիների համար ներկայացրել է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություններ երկու երթուղիների սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների (առանց պահուստային տրանսպորտային միջոցների) քանակին համապատասխան և հարկերն էլ վճարել է նույն քանակին համապատասխան, ապա անհրաժեշտ է նշել, որ հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունները և հարկային մարմինն իրավասու չէ հայեցողական կարգով փոփոխելու (միացնելու կամ առանձնացնելու) հարկ վճարողի կողմից հաստատագրված վճարի առանձին օբյեկտներ հանդիսացող պարտավորությունների չափը: <<հաստատագրված վճարների մասին>> << օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ հաստատագրված վճարի չափը չի կարող պակաս լինել ոչ թե երթուղիների, այլ տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների քանակից:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ստուգման ակտով 2009թ-ին կատարված խախտումների համար հաստատագրված վճարների գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, որոնք չեն բխում << օրենսդրության պահանջներից: Մասնավորապես, <<Հարկերի մասին>> << օրենքի 30.1 հոդվածի համաձայն, հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2009թ-ին կատարված խախտումների համար ստուգման ակտով լրացուցիչ վճարման ենթակա պարտավորություններ չեն կարող առաջադրվել: Այսինքն, 2009թ-ին կատարված խախտումների համար հաստատագրված վճարների գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 8.053.171 դրամ, ենթակա են նվազեցման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <<Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին>> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

<< ԿԱ ՊԵԿ Մասիսի ՏՏՏ 14.03.2013թ-ի թիվ 2119264 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել ընդամենը 8.053.171 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճար 3.750.020 դրամ, տույժ 2.053.139 դրամ, տուգանք 2.250.012 դրամ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ